ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի 2012թ. N__-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի հ.286 որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետով, հաշվի առնելով Լևիկ Աղաբեկյանի դիմումը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է՝

1. Տալ համաձայնություն՝ Լևիկ Աղաբեկյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 25.08.2010թ. հ.2775352 վկայական) Երևան քաղաքի Բաբաջանյան փողոցի հ.25/1 հասցեում գտնվող 930.0քմ մակերեսով հողամասից 196.4քմ /107.6քմ+88.8քմ/ մակերեսով հողամասերը հարակից տարածքում գտնվող Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող 196.4քմ մակերեսով հողամասի հետ փոխանակելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քննարկվող նախագծով նախատեսվում է քաղաքացի Լևիկ Աղաբեկյանին Բաբաջանյան փողոցի հ.25/1 հասցեում սեփականության իրավունքով պատկանող հողամասը փոխանակել համայնքային սեփականություն հանդիսացող հարակից հողամասի հետ:

Նշված հասցեում Լևիկ Աղաբեկյանին պատկանող հողամասում, համաձայն ճարտարապետահատակագծային առաջադրանքի, նախատեսվում է կառուցել բազմաբնակարան շենք, որի նպատակն է լուծել «ESCO» կոնցեռնի հետ ժամանակին պայմանագիր կնքած, վճարում կատարած, սակայն մինչ օրս բնակարան չստացած (տուժող ճանաչված) քաղաքացիների բնակարանային խնդիրները, սակայն կառուցապատման նպատակահարմարությունից, դիրքից և բնակարանների քանակը ապահովելու խնդրից ելնելով անհրաժեշտություն է առաջացել կատարելու հողամասերի փոխանակություն:

Ստեղծված իրավիճակում խնդրի կարգավորման նպատակով Լևիկ Աղաբեկյանին առաջարկվել է սեփականության իրավունքով պատկանող 930.0քմ մակերեսով հողամասից 196.4քմ մակերեսով /107.6քմ+88.8քմ/ հողամասը փոխանակել հարակից տարածքում գտնվող Երևան համայնքի սեփականություն հանդիսացող 196.4քմ մակերեսով համարժեք հողամասի հետ:

Քննարկվող հողամասերը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1), 2), 3) ենթակետերի պահանջներին, ընդգրկված չեն նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում է 7-րդ գոտում:

«Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունումը պայմանավորված է քննարկվող հողամասերի օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու հանգամանքով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ Երևան համայնքի բյուջեում եկամուտների և ծախսերի փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ